

Հարց

«Էլեկտրոնային հաղորդակցության» ԼՂՀ օրենքի համաձայն՝ ի՞նչ դեպքերում է Կարգավորողը իրավասու կասեցնել կամ դադարեցնել ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունը:

Պատասխան

Ի լրումն «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված կասեցման կամ դադարեցման հիմքերի, Կարգավորողն իրավասու է կասեցնել կամ լիցենզիայի դադարեցման դիմում ներկայացնել դատարան, ինչպես նաև կասեցնել կամ դադարեցնել ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունը, եթե՝

- 1) լիցենզավորված անձը դիտավորյալ կեղծ տեղեկություն է ներկայացրել լիցենզիայի կամ թույլտվության համար իր ներկայացրած դիմումի կամ Կարգավորողին տրամադրված ցանկացած հայտարարության մեջ.
- 2) լիցենզավորված անձը դիտավորյալ չի տրամադրել այնպիսի տեղեկություններ կամ ապացույցներ, որոնք կհանգեցնեին այդ լիցենզիայի կամ թույլտվության տրամադրելը մերժելուն.
- 3) լիցենզավորված անձը դիտավորյալ խախտել է սույն օրենքը կամ դրա համաձայն ընդունված որևէ կանոն կամ կանոնակարգ.
- 4) լիցենզավորված անձը դիտավորյալ չի կատարել իր լիցենզիայի կամ թույլտվության պայմանները.
- 5) լիցենզավորված անձը խախտել է կամ չի կատարել սույն օրենքի 60-րդ հոդվածի համաձայն տրված դադարեցման մասին հրահանգը.
- 6) լիցենզավորված անձը չի վճարել դիմումի կամ լիցենզիայի կամ թույլտվության գործողության երկարացման վճարը կամ համընդհանուր ծառայությունների որևէ վճար.
- 7) կասեցումը կամ դադարեցումն անհրաժեշտ է ազգային անվտանգության կամ հանրային շահի նկատառումներով: